ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ

08.03.2023

Հայ կինը պատմության տարբեր ժամանակներում հաղթահարել է բազմաթիվ մարտահրավերներ, առանձնահատուկ դերակատարություն է ունեցել ընտանիքում իր անձնազոհ ու անսահման նվիրվածությամբ:

Այսօր էլ չի փոխվել հայ կնոջ ացառիկ դերը. նա շարունակում է մնալ իր ընտանիքի ու տան հիմնասյունը: Նրա շնորհիվ պահպանվել ու սերունդներին են փոխանցվել ավանդույթներով հարուստ մեր պատմությունը, գիրն ու գրականությունը, մշակույթն ու ազգապահպան արժեքները:

Եվ ամենևին էլ պատահական չէ, որ բնության զարթոնքի հետ տոնում ենք մեր կյանքը սիրով ու լույսով, հոգատարությամբ ու ջերմությամբ լցնող կանանց տոնը:

Սիրելի՛ կանայք, այսօր գարնանային այս հոգեպարար օրը, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի առթիվ:

Դուք ձեր նվիրվածության, բարության, հոգատարության, սիրո, իմաստության շնորհիվ միշտ վառ եք պահում հայկական օջախի կրակը, պահպանում եք մեր ավանդույթներն ու արժեքները: Հոգատար մոր ու սիրող կնոջ ջանքերի շնորհիվ է անսասան մնում հայ ընտանիքը, հաղթահարվում են ամենօրյա դժվարությունները:

Շնորհակալություն եմ հայտնում ձեզ հասարակական ու պետական գործունեության տարբեր ոլորտներում ձեր մասնագիտական հմտություններն իրացնելու համար, դուք հավատարիմ եք մնում ազգային արժեքներին, ընտանիքներին ու ձեր հիմնական առաքելությանը՝ շարունակել կյանքը Երկրի վրա և մշտապես ձգտել աշխարհն ավելի լավը դարձնելուն:

Առանձնահատուկ երախտագիտությամբ շնորհավորում եմ մեր հայրենիքի համար կյանքը նվիրաբերած զինվորների մայրերին, կանանց ու քույրերին: Առողջություն ու բարեկեցություն եմ մաղթում ձեզ:

Սիրելի՛ կանայք, եղե՛ք միշտ առողջ, երջանիկ ու ձեզ բնորոշ հմայքով ու պայծառությամբ լի, շրջապատված անսպառ սիրով, ուշադրությամբ ու հոգատարությամբ: Թող երջանկությունը միշտ ապրի ձեր սրտերում, կանացի հմայքը, պայծառ ժպիտը, քնքշությունն ու գրավչությունը ձեր հավերժական ուղեկիցները լինեն:

Դուք արժանի եք ուշադրության, սիրո, աջակցության տարվա այս ու առհասարակ բոլոր օրերին…